Հաշվետվություն

2025 թվականի նոյեմբերի 3-ից 7-ը Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Փարիզի հյուսիսային արվարձան) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը**
   ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ (կրճատ՝ «ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ), Գլխավոր տնօրեն:

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Փարիզի հյուսիսային արվարձան) 2025թ. *սեպտեմբերի նոյեմբերի 3-ից 7-ը*:

4. **Հրավիրող կողմը**
   Համաշխարհային միջուկային էքսպո «Reed Expositions France» (RX France) կազմակերպություն:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**
   ՀՀ պատվիրակության կազմում, բաղկացած 5 անդամներից մասնակցել Ֆրանսիայում կազմակերպված «Համաշխարհային միջուկային էքսպո» և հանդիպումներ օտարերկրյա գործընկերների հետ:

6. **Քննարկված թեմաները**
   «Համաշխարհային միջուկային էքսպո»-ին մասնակցում էին ատոմային էներգետիկայի բնագավառի գրեթե բոլոր երկրները, որոնք ցուցադրում էին իրենց երկրում արտադրվող միջուկային տարբեր հզորության ռեակտորների վերաբերյալ տեխնիկական տվյալները, ինչպես նաև տարաբնույթ սարքավորումներ, որոնք կիրառվում են ատոմային էներգետիկայում:

   ՀՀ պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ԱՄՆ, Ֆրանսիայի, Չինաստանի, Հարավային Կորեայի, Սլովակիայի, Հունգարիայի, Իսպանիայի, Իտալիայի, Ուկրաինայի, Բուլղարիայի, Գերմանիայի և այլ երկրների կազմակերպությունների ղեկավարների և մասնագետների հետ: Ծանոթացանք նրանց կողմից ներկայացված միջուկային էներգետիկայում կիրառվող սարքավորումների հետ: Եղան հարց ու պատասխան և պարզաբանումներ:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը**

ՀՀ պատվիրակությունը ամբողջ կազմով հանդիպումներ ունեցավ՝ Westinghouse, ESG, EDF, Franceatom, Cyclife, Orano, I2EN, VUJE, INETEC, HOLTEC և այլ կազմակերպությունների ղեկավարների և մասնագետների հետ:
Քննարկվեցին մեր երկրի այսօրվա և ապագայի ատոմային էներգետիկայի բնագավառի տարաբնույթ խնդիրներին վերաբերվող հարցեր, որոնք հրապարակման ենթակա չեն:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները հրապարակման ենթակա չեն:

Ստորագրված փաստաթղթեր չկան:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Եղան առաջարկություններ, որոնք ենթակա են քննարկման ՀՀ վերադաս մարմինների հետ:

ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ
11.11.2025թ.